

## ՄԻԵԴ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ 39-ՐԴ ԿԱՆՈՆՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԳՈՐԾԵՐ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Կանոնագրքի 39-րդ Կանոնի համաձայն, կողմերից մեկի կամ ցանկացած շահագրգիռ անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ Դատարանը կարող է որոշել կիրառել հայցի ապահովման միջոցներ: Նման միջոցներ ձեռնարկվում են այն գործերով, որոնցով առկա է հիմնավոր ռիսկ ծանր և անդառնալի վնասի պատճառման վերաբերյալ: Կանոնակարգի 39-րդ դրույթի համապատասխան, ՄԻԵԴ-ը կարող է կողմերի նկատմամբ կիրառել ցանկացած ժամանավոր միջոցներ, որոնք նպատահարմար կհամարի կողմերի իրավունքների պաշտպանության և գործի պատշաճ քննության համար: Դատարանն իրականացնում է վերահսկողություն վերոնշյալ միջացառումների պատշաճ իրականացման նկատմամբ, մինչդեռ Պետությունը, որը գտնում է, որ ունի համոզիչ հիմնավորումներ համապատասխան միջոցառումը չկիրառելու համար, պետք է դրանց մասին տեղեկացնի Դատարանին (*Paladi v. Moldova* [ՄՊ], §§ 90-92; *Olaechea Cahuas v. Spain*, § 70; և *Groni v. Albania*, §§ 181 և այլն):

ՕՐԻՆԱԿ. Ուկրաինայի իշխանությունները, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 33-րդ հոդվածի հիմքով, այն է՝ Բարձր պայմանավորվող ցանկացած կողմ կարող է Դատարան դիմել կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների դրույթների ցանկացած ենթադրվող խախտման հարցով, որը թույլ է տվել Բարձր պայմանավորվող մեկ այլ կողմ, մարտի 13-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարան ընդդեմ Ռուսաստանի միջպետական հայց են ներկայացրել: Հայցվոր կողմը, ՄԻԵԴ-ի կանոնակարգի 39-րդ դրույթի համապատասխան, նաև միջնորդել է ՌԴ-ի նկատմամբ ժամանակավոր միջոցներ կիրառել՝ վերջինիս կողմից Ուկրաինայի տարածքում անձանց կյանքին և առողջությանը սպառնացող հնարավոր ցանկացած գործողություններ թույլ չտալու նպատակով: ՄԻԵԴ-ը բավարարել է միջնորդությունը՝ նկատի ունենալով, որ Ուկրաինայում ներկայիս իրավիճակը եվրոպական կոնվենցիան խախտելու լուրջ ռիսկեր է պարունակում: Նման խախտումներից զերծ մնալու նպատակով 39-րդ դրույթի շրջանակներում, կոչ է

արել պայմանավորվող կողմերին գերծ մնալ ցանկացած միջոցների ձեռնարկումից, մասնավորապես՝ ռազմական գործողություններից, որոնք կարող են հանգեցնել բնակչության կոնվենցիայով նախատեսված իրավունքների խախտմանը, ինչպես նաև չվտանգեն նրանց կյանքն ու առողջությունը: Երկու կողմերին առաջարկվել է կարճ ժամկետում ՄԻԵԴ-ին տեղեկացնել կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված քայլերի մասին:

12.08.2008 թ.-ին ՄԻԵԴ-ը նմանատիպ որոշում է կայացրել նաև Ռուսաստանի և Վրաստանի վերաբերյալ՝ մասնավորապես կոչ է արել երկու կողմերին գերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք իրենց մեջ մասնավորապես Կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքի խախտման ռիսկ են պարունակում:

Ադրբեջանում գերության ընթացքում սպանված Կարեն Պետրոսյանի ընտանիքը 10.09.2014թ.-ին նույնպես դիմել է ՄԻԵԴ՝ Պետրոսյան ընտանիքի անդամների ընտանեկան և անձնական կյանքի իրավունքի անդառնալի և շարունակական խախտումը կանխելու նպատակով՝ դատարանի կանոնագրքի 39-րդ կանոնի հիմքով խնդրելով ՄԻԵԴ միջամտությունը Կ. Պետրոսյանի դին անհապաղ և անվնաս վիճակում ընտանիքին վերադարձնելու նպատակով: Պետրոսյան ընտանիքի պահանջին ի պատասխան ՄԻԵԴ-ը պահանջել է Ադրբեջանի կառավարությունից պաշտոնապես բացատրություն ներկայացնել Կարեն Պետրոսյանի մարմնի վերադարձման հարցի առնչությամբ Ադրբեջանի պաշտոնական դիրքորոշման և դին ընտանիքին վերադարձնելու ձգձգումների պատճառների մասին: Կատարված գործողությունների արդյունքում, ի վերջո Կարեն Պետրոսյանի դին Ադրբեջանի կողմից 10.10.2014 թ.-ին հանձնվեց ՀՀ-ին:

Հարկ է նշել, որ ՄԻԵԴ 39-րդ կանոնի հիմքով կարող են դիմել նախքան հիմնական գանգատ ներկայացնելը, այն ունի կանխարգելիչ նշանակություն, ուստի, որպես կանոն վերոնշյալ կանոնի հիմքով բողոքները հիմնականում ներկայացվում են բարդ և շուտափույթ լուծում պահանջող դեպքերի առթիվ: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ Դատարանը 39-րդ կանոնի հիմքով բողոքները քննում է անհապաղ և կայացնում որոշում, որը վերջնական է, այսինքն՝ դիմումի մերժման դեպքում դիմումատուն զրկվում է որոշումը

բողոքարկելու իրավունքից, սակայն, դիմումատուն հնարավորություն է ունենում կրկին դիմելու նոր հանգամանքի ի հայտ գալու դեպքում:

Չնայած այն հանգամանքին, որ 39-րդ կանոնի կիրառման վերաբերյալ գոյություն չունի սահմանված չափորոշիչներ, այնուամենայնիվ Դատարանի նախադեպային որոշումներից պարզ է դառնում, որ ՄԻԵԴ-ի 39-րդ կանոնը սովորաբար կիրառվում է Կոնվենցիայի 2-րդ, 3-րդ, բացառիկ դեպքերում նաև 4-րդ և 8-րդ հոդվածների հնարավոր խախտումները կանխելու նպատակով:

**Ադամի Մադոյան**

**ՀՀ փաստաբանների պալատի**

**Երիտասարդական խորհուրդ**